



Տիգրան Կարապետի Սիմոնյանը ծնվել է 1988 թվականի նոյեմբերի 3-ին Երևան քաղաքում:

2008 թ.- ին գերազանցությամբ ավարտել է Երևանի Պետական Համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետը, ստացել է Ֆիզիկայի բակալավր, Մանկավարժություն մասնագիտությունների որակավորման գերազանցության դիպլոմ: 2010 թ.-ին ավարտել է Երևանի Պետական Համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի մագիստրատուրան, ստացել է ֆիզիկայի մագիստրոսի աստիճան:

Տիգրան Սիմոնյանը մասնակցել է որակավորման մի շարք դասընթացների Հայաստանում և արտերկրում: 2008 թ.-ի փետրվար – հուլիս ամիսներին մասնակցել է Ինտերնետ տեխնոլոգիաների ուսումնական ծրագրին՝ ստանալով հավաստագիր Sun Microsystems, Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամի (EIF), ԱՄՆ Միջազգային Զարգացման գործակալության (USAID) և Երևանի Պետական Համալսարանի կողմից Ինտերնետ տեխնոլոգիաների ուսումնական ծրագրի Վեբ տեխնոլոգիաներ, PHP, JAVA, Օբյեկտ կողմնորոշված ծրագրավորում, Տվյալների բազաներ, Պրոեկտների կառավարում և Որակի ապահովում դասընթացները հաջողությամբ ավարտելու համար:

2012 թ.-ի դեկտեմբերի 22-ին ICBRR (International Certificate in Banking Risk and Regulation) որակավորման քննության հաջողությամբ հանձնելու արդյունքում ստացել է միջազգային վկայական Բանկային ռիսկերի և կարգավորման ոլորտում Global Association of Risk Professionals (www.garp.org) կազմակերպության կողմից: 2016 թ.-ի դեկտեմբեր ամսին ուսանել է Լոնդոնում և ստացել է միջազգային վկայական SS ոլորտում կառավարման հմտությունների որակավորման քննությունը հաջողությամբ հանձնելու համար:

Մասնակցել է նաև մի շարք այլ մասնագիտական դասընթացների, այդ թվում Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի և Business & Finance Consulting-ի կողմից «Ռիսկերի կառավարում», Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) կողմից կազմակերպված «Bazel II-ի սկզբունքները», պրոֆեսոր Ֆիլիպ Կոտլերի կողմից անցկացված «Մարքեթինգ 3.0» (արժեքներն վրա հիմնված մարքեթինգ, շահութաբերություն, վերադարձելիություն, կայունություն)

թեմայով «CEO's FORUM», KFW Գյուղատնտեսության ոլորտի ծրագրի կողմից կազմակերպված «Կլիմայի փոփոխության ռիսկի ներածություն» և մի շարք այլ թեմաներով դասընթացների:

Իր մասնագիտական գործունեությունը Տիգրան Սիմոնյանը սկսել է 2009 թ.-ի հունվարի 12- ից Կոնվերս Բանկ ՓԲԸ-ում որպես վարկային մասնագետ:

01.06.2009-31.01.2013թթ.-ը Տիգրան Սիմոնյանը աշխատել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում, որպես ռիսկերի կառավարման մասնագետ: Այնուհետև 01.02.2013 թ.-ին տեղափոխվել է Բանկի Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման վարչություն, որպես Տեխնիկական առաջադրանքների մշակման բաժնի մասնագետ:

08.01.2014 թ.-ին նշանակվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Տեխնիկական առաջադրանքների մշակման բաժնի պետ:

2017 թ.-ին հունվար ամսին, Տեխնիկական առաջադրանքների մշակման բաժինը շուրջ 3 տարի ղեկավարելուց հետո նշանակվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Ռիսկերի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար:

15.12.2017 թ.-ին նշանակվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Ռիսկերի կառավարման վարչության պետ:

2018 թ.-ի մայիսի 14-ից փոխադրման կարգով նշանակվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման վարչության պետ:

2020 թ.-ի ապրիլի 1-ին նշանակվել է «Ակբա բանկ» ԲԲԸ Պլատֆորմների և տեխնոլոգիաների զարգացման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ:

2025 թ.-ի մարտի 3-ին նշանակվել է «Ակբա բանկ» ԲԲԸ Թվային պլատֆորմների և տեխնոլոգիաների գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ:

Ամուսնացած է, ունի դուստր և որդի: